Արձանագրություն N 2

«ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-24/83» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

(«Տեղական արտադրության դեղերի ներկայացման հեռուստահաղորդաշարի պատրաստման և հեռարձակման ապահովման»)

ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 18 սեպտեմբերի 2024թ. Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Գնման գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մարգարյան

Գնման գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Ա. Եգանյան

Գնման գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Լ. Շաբոյան

ԷԱՃ ընթացակարգի քարտուղար՝ Ա. Ղարիբջանյան

1. ԷԱՃ ընթացակարգի հայտերի բացման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

ա. «Տեղական արտադրության դեղերի ներկայացման հեռուստահաղորդաշարի պատրաստման և հեռարձակման ապահովման» ձեռքբերման հրավերը 23.08.2024թ. հրապարակվել է «gnumner.am» կայքի գնումներ կատարելու ԷԱՃ ընթացակարգի հայտարարություններ բաժնում, ինչպես նաև eauction.armeps.am էլեկտրոնային կայքում:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 03.09.2024թ.:

բ. Հակադարձ աճուրդը կայացել է 2024 թվականի սեպտեմբերի 4-ին https://eauction.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-24/83 ծածկագրով ընթացակարգի բացումը տեղի է ունեցել օգոստոսի 4-ին ժամը՝ 11:00-ին:

գ.Euction.armeps.am համակարգի միջոցով հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«Էլիքս»	ՀՀ, ք.Երևան, ՀՀ, ք.Արտաշատ, Մարքսի 7Ա, հեռ.(041)800014, էլ. փոստ elxamllc@gmail.com

2. Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1 **10.09.2024 թվականի նիստում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ** մասնակցի հայտում առկա է հրավերի պահանջների հետ անհամապատասխանություն, մասնավորապես հրավերի տեխնիկական բնութագրով սահմանվել էր պահանջ, որ Թեկնածուն պետք է ունենա համապատասխան լիցենզիա, իսկ մասնակցի հայտով ներկայացվել է փաստաթուղթ, որով «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲԸ-ի տնօրենը լիազորում և թույլատրում է «Էլիքս» ՍՊԸ-ին, որպես թեկնածու ներկայացնել «Տեղական արտադրության դեղերի ներկայացման հեռուստահաղորդաշարի պատրաստման և հեռարձակման ապահովման» գնման առարկան:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 67-րդ կետով՝ գրություն է ներկայացվել ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով:

2.2. Հանձնաժողովը Մ/36743-2024 գրությամբ պատասխանել է, որ իր կողմից 2022 թվականի դեկտեմբերի 23-ին «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերությանը տրամադրվել է հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման ԵՀ N 345 լիցենզիան, սփռման տարածքը՝ Հայաստանի Հանրապետություն, լիցենզիայի գործողության ժամկետը՝ 24.12.2022թ.-24.12.2029թ.: Ինչ վերաբերում է «ԷԼԻՔՍ» ՍՊ ընկերությանը, ապա տվյալ ընկերությունը Հանձնաժողովի կողմից լիցենզավորված չէ: Միաժամանակ արձանագրել է, որ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) կարգավորումների համաձայն տեսալսողական հաղորդումների հեռարձակման միակ օրինական հիմքը լիցենզիան է, իսկ Օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիցենզիան չի կարող փոխանցվել կամ օտարվել այլ անձի, ինչպես նաև «Լիցենզավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով նույնպես սահմանված է, որ լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Առաջնորդվելով Որոշման 41-րդ կետով՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը և առաջարկում մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

3. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

Հարցումներ չեն ստացվել:

4.Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի վերաբերյալ

4.1 Մասնակցի գնային առաջարկը հետևյալն է.

Չափաբաժին	Ծառայության անունը	Մասնակցի անունը	Գինը (Առանց ԱՀՀ)	ԱԱՀ/ՀՀ դրամ	Գինը (ներառյալ ԱՀՀ)	Նախահաշվային գինը
1	տեղական արտադրության դեղերի ներկայացման հեռուստահաղորդաշարի պատրաստման և հեռարձակման ապահովման	«Էլիքս» ՍՊԸ	9,990,000	0%	9,990,000	10,000,000

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ _____ Ա. Մարգարյան

Անդամներ՝

_____ Ա. Եգանյան

_____ Լ.Շաբոյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ա. Ղարիբջանյան